

Kubilai խանին Polo եղբարց տալը ուս-
կէտախառնակին : Էջ 18 լուսանկարն է
Ca'Polo դրան ի վէնետիկ : Էջ 96 քար-
տէս մըն է հին Atlas մը հանուած (Bi-
bliothèque Nationale, Paris), ուր
ցոյց կը տրուի նաեւ ուղտերու, հետեւակ-
ներու և ձիաւորներու կարաւանը Polo
եղբարց : Էջ 148 Չինական թղթադրամ
մը Hung-Wu իշխանութեան օրերէն,
1368-98 : Էջ 208 Henricus Martel-
lusի մէկ աշխարհացոյցը : Իսկ էջ 284
Ramusioի Navigat. et Viaggi նշա-
նաւոր գործէն (1559) աշխարհացոյց մը
Հնդկաստան և Չինաստան ներկայացնող :
Էջ 336 աշխարհացոյց մը Bernardus
Sylvanusէն :

Ինչպէս ըսի, մաղթենք որ օր մը այս
հատորն ալ հարազատ թարգմանութեամբ
մը հրատարակուի Հայ Մամուլէն :

Ibn Battuta Travels in Asia and Africa 1325-1354

Trans. H. A. R. GIBB. New York Robert M.
Mc Bride & Co. 1929. էջ 398, ութը պատկերներով
և քարտէսներով, Գին 5 S^o L.

The Argonaut Series կոչուած հե-
տաքրքրական և երկար շարքին մաս կը
կազմէ այս հատորս ալ, նման Thomas
Herbertի Travels in Persiaին : (Գը-
րախօսական տես «Բազմալէս», Մայիս
1933, էջ 217) Sir E. Denison Ross
և Eileen Power հին ճանապարհորդներու
այս հազուագիւտ ուղեգրութիւնները, մեծ
ծառայութիւն մատուցած կ'ըլլան զանոնք
հրատարակելով եւ մատչելի ընելով ու-
սումնասէրներու : Այս շարքէն ուրիշ կա-
րեւոր և Հայոց հետ առնչութիւն ունեցող
հատորներու մասին պիտի խօսիմ իրենց
կարգին :

Իսկ Պաթուխա 1304 Փետրուար 24ին
թանձերի (հիւսիսային Ափրիկէ) ծնած
արաբ մ'էր որ այցելեց Իսլամական աշ-
խարհը, որուն մաս կազմելով Հայաս-

տանն ալ՝ անբաժին չմնաց աշխարհագիր
արաբին ուղեգրութենէն : Ուղեգրութեան
Հայոց և Հայաստանի վերաբերող մասը
հրատարակած եմ «Հայրենիք Ամսագրի»
մէջ՝ Հին ճանապարհորդութեանց շար-
քին (տես ԺԲ տարի, Թիւ 3) որով զանց
կ'ընեմ կրկնել հոս :

Ներկայ հրատարակութիւնը, ինչպէս որ
յառաջարանին մէջ անգլիերէնի թարգմա-
նիչ H. A. R. Gibb կ'ըսէ, Իսկ Պա-
թուխայի ուղեգրութեան ամբողջական
թարգմանեալ հրատարակութիւնը չէ, այլ
համառոտեալ կամ մասնակի հրատարա-
կութիւնը, զանց ըրած մանրամասնութիւն-
ները : Երբ ամբողջական հրատարակու-
թիւնը ձեռք բերեմ, այն ատեն կը յուսամ
տալ ամբողջական թարգմանութիւնը Հա-
յաստանի, Փոքր Ասիոյ և շրջականերուն
մասին խօսող բաժնին :


Իսկ Պաթուխա կը խօսի նոյնիսկ իր
ժամանակի Չինաստանի, Հնդկաստանի
մասին ալ ուր կըցած էր այցելել : Նոյն-
պէս նաեւ Կ. Պոլիս, Ղըրիմ, Կաֆա եւն. :
Կարելի է զինքը վստահելի նկատել, հա-
ւանօրէն գրած ըլլալով տեսածն ու լսածը :



ՀԱՅ ԳՐԻ ՄՇԱԿՆԵՐ

Մխիթարեան Ուխտիս հայկական մատե-
նադարանին զրկեցէք ձեր բոլոր հրատարա-
կութիւններէն (գիրք, թերթ, օրագիր եւն.)
գրախօսելու կամ համարժէք գրքեր ստա-
նալու պայմանով :

Մի մոռնաք որ այդ կերպով սատարած
պիտի ըլլաք միանգամայն ողբ. Հ. Ա. Ղա-
զիկեանի կիսատ թողած հսկայ «Հայկ.
մատենագիտութեան» ամբողջական հրա-
տարակութեան ատաղձ հայթայթելով եւ
աշխատողները քաջալերելով : ԽՄԲ.



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ - ՀԱՆԴԷՍ ՀԱՆԴԻՍԻՑ

ԶԱՐԾԱՆԱԼԻ չէք գտներ, միեւնոյն
սուրհանդակով, միեւնոյն օրը մեր հեռա-
ւոր կղզեակն հասան զոյգ ձայներ՝ Վոս-
փորի ափերէն արձակուած : Ո՞նկախ իրար-
մէ, տարբեր ձեռնարկներով, բայց նոյն
ցաւէն տառապող ու գիտակից հոգիներէ
բխած, որոնք, երկուքն ալ, գեղեցիկ և
ազնիւ դիտումով մեր գրականութեան շունչ
և շարժում տալու հոգն են ստանձնած, հոն՝
ուր երբեմնի մեր մտաւորական կեանքի ու-
տանը, Կ. Պոլիս, աւերակ է այսօր, և
դիակի մը սարսուռը կու տայ : «Ազգարար»ի
խմբագրին տուած պատկերն է զոր ընդգը-
ծեցինք : Պ. Ասլանեան՝ ըմբռնած թէ այսօր
օրաքերքն է ժամադրաւայրը հայ հանրու-
թեան, կը խոստանայ հոն գաղտագողի
ներմուծել գր.-գեղարուեստական «կտոր-
ներ» գորս՝ նոյնիսկ ակամայ՝ պիտի կար-
դայ մեր ժողովուրդը, կամ ինչպէս ինք
կ'ըսէ՝ «Մաքսանենգութիւնն է որ կ'ուզէ
փորձել Ազգարար մեր գրականութեան
համար» :

«Փորձ» մը, անշուշտ. բայց կը մաղ-
թենք որ ընթերցող ու գրող իրենց մաս-
նակցութիւնը լայնօրէն բերեն. և այն
ատեն՝ Պ. Ասլանեան ուրախ պիտի ըլլայ
փարատելու կասկածանք մը՝ որմէ բռն-
նուած է կոչն ուղղած պահուն իսկ :

Գրական շարժումի միւս կողմ արձա-
կողը՝ գրական հրապարակին վրայ նոր
գրողներու շարքին ծանօթ դէմքն է. Պ.
Թորոս Ազատեան այդ «ուշագրաւ տղան»,
ինչպէս կը կոչէ Օշական, և կը համակրի
անոր «ձեւին, զաշնակաւոր իր ոճին, նը-
կարող իր նայուածքին» բնորոշելով զանի

«իր սերունդէն կը տարբերի վախկոտու-
թեամբ մը, չափի մէջ մնալու ժողովուր-
թեամբ մը» : Ահա Ազատեան, որ երկու
տարի առաջ «Արեւելք»ի կողքին ընծայեց
մեզի գրական գեղեցիկ անակնկալ մը, որ
դժբախտաբար հազիւ կէս տարի տեւեց. և
հիմա «Մշակոյթ»ի պատգամով ձեռնար-
կած է «Կարեւոր ու շատ դժուար աշխա-
տութեան» մը՝ ՆՊԱՏԱԿ ունենալով «Հետ-
զհետէ լոյսին բերել անհետացող դէմքերու
նշխարները (գեղարուեստական, պատմա-
կան ու մատենագրական երկեր, հին ու
նոր վաւերագրեր ու նամակներ), Ազգա-
գրական նիւթեր և ուսումնասիրութիւններ,
ինչպէս նաեւ Արեւմտահայ արժէքաւոր
մտաւորականներու հատորներէ դուրս ցան
ու ցիր կամ բոլորովին սպառած երկեր,
կենսագրական ծանօթութիւններով և լու-
սանկարներով ճոխացած :

Հրատարակել նաեւ Տարեգիրք, Հան-
դէս, ինչպէս նաեւ շահեկան գործերը ապ-
րող մտաւորականներու» :

Եւ Պրն. Նշանեանի հետ ձեռնարկած
«Մշակոյթ» մատենաշարին համար Պրն.
Ազատեան արդէն կազմած է ճոխ ցանկ
մը հաւանօրէն հրատարակելի երկերու՝
գորս հոս մէջ կը բերենք ի գիտութիւն
գրասէր հայ հասարակութեան :

1. Պատմութիւն Արեւմտահայ Գրականութեան :
2. Կենսագրական Բառարան :
3. Պատմութիւն Հայ Թատրոնի :
4. Հաւաքածոյ Ժողովրդ. և Աշուղական երգերու :
5. Պատմաբարբառներ, Հեքիաթներ, Եւն. :
6. Հայ Վանքեր ու Կրթարաններ :
7. Ուղեգրութիւններ և Հին Տեղեկագիրներ :
8. Ահնայ Ոսկեմատենան (Յիշատակարան) :

9. Ակնայ Հարսնիքը (Թատերախաղ)։
10. Ապուլեյի «Սասանցի» Աւետարանը (Աւպօմ, ընդարձակ ներածութիւնով)։
11. Տատեաններու պատմութիւնը։
12. Ճէզայիւրեան Մկրտիչ Ամիրայի կեանքը։
13. Խորմեան Հայրիկի նամակագրութիւնները։
14. Ն. Աշտարակեցի կաթողիկոսի կոնդակներն ու նամակները։
15. Գ. Սրուանծտեանց Եպիսկ.ի նամակներն ու անտիպ գրութիւնները։
16. Օրագրութիւններ և Ինքնակենսագրութիւններ (Աղայէկեանի, Նորիկեանի, Մկրտիչի, Ս. Քենյ.ի ևն)։
17. Պատմական կոնդակներ ու վաւերագրեր։
18. Հաւաքածոյ հին ծաղրագրութիւններու (արձակ և ոտանաւոր)։
19. Կոմիտաս Վրդ.ի Բ. Հատորը (յօդուածներ, քերթուածներ և երաժշտական ուսումնասիրութիւններ)։
20. Բ. Քէչեանի անտիպ երկասիրութիւնը հին Գթու. Թեան յարկերու վրայ (Գ - ԺԸ դար)։
21. Մ. Մեծարեցի արձակները (հաւաքածոյ)։
22. Մ. Զարիֆեանի բանաստեղծութիւնները (տակաւին հատորի մէջ չամփոփուած)։
23. Հայ կանացի ղէմքեր։
24. Գ. Թէրզեանի քերթուածները (անտիպ)։
25. «Մշակոյթ» Տարեգիրք։

Եւ աւելցնենք որ արդէն մօտեցաւ հրատարակութեան կը յանձնուի Մ. Մեծարեցի արձակներուն հաւաքածոն, որուն ձեռնարկած է ներկայիս նաեւ Պետհրատը՝ Երեւանի մէջ։

Իսկապէս ծանր աշխատանք. անոր իրագործումին համար այժմէն մեր մաղթանքն ու լիայոյս ակնկալութիւնը։

Պիտի ըսենք թէ այս ալ ձեռնարկ մ'է նոյնքան ազնիւ և ազգօգուտ գրական տեսակէտով՝ որքան եղաւ «Նահատակ գրագէտներու բարեկամներ»ու մատենաշարը, որուն ցարդ երեւցած ութ հատորներն ալ (վերջինը՝ Օհան Կարոյի «Խորհրթիւններն մինչեւ խորհրդարանը» արձակ էջեր եւ քերթուածներ) այնքան մեծ ընդունելութիւն գտան հայ հասարակութենէն։

Նորագոյն գրական շարժման մէջ իր բարձր ու պատկառելի դերն ունի Վրացեանի խմբագրած ճոխ «Վէմ»ը, որուն ուղղութեան և նիւթերու մասին յետոյ պիտի անդրադառնանք Հանդիսներու կարգին։

Եզրիպատահայ գաղութին մամուլէն շուրջ տարի մ'է որ կը փայլի «Հայ Դպրոց»ը

կրթական գովելի ուղղութեամբ մը՝ որ կ'արդարացնէ իր տիտղոսը, և ըստ այսմ ամէն հայ դպրոցի և ընտանիքի մէջ կատարելիք դեր ունի։

Նորագոյն շարժում մ'ալ Յունաստանի մէջ ունեցանք։ Երկու տարի առաջ, ինչպէս ակնարկած ենք ուրիշ անգամ, ասուպի պէս երեւցաւ «Այգեստան» մը, գրական ճոխ բովանդակութեամբ, բայց իսկոյն անյայտացաւ։ Այս անգամ աւելի նորահասներու «համեստունակ» ձեռնարկովն է որ լոյս կը տեսնէ «Փունջ» պարբերական գրականութեան և գեղարուեստի։

Մօտէն հետեւելով նկարագրին և բուսանդակութեան արդէն ընթերցողը պիտի տեսնէ անկեղծութիւնն այդ պատանինեւրուն՝ որ նախ գիտակից իրենց կեանքի հմայքոտ գարնան՝ կ'ուզեն ձեռք ձեռքի նոյն հայկական բուրաստանին մէջ փութթիլ և փոխադարձ ներշնչել սէրն ու պաշտամունքը գեղեցկին։ Գուրգուրոտ զգացում մը կայ իրենց մէջ գաղութի խոնարհ դասակարգին ձեռքը տալ սիրուն փնջիկ մը՝ հայախօս ծաղիկներու որպէսզի «դեղթափ» ըլլայ ան այլախօսութեան դէմ՝ որ կը տիրէ գաղութին մէջ։

Թերթին մէջ կը տեսնուին սկսնակներու նախաքայլեր։ Զարմանալի չէ ուրեմն որ հոն լեզուի և գրականութեան թերիւնք սպրդին։ Խմբագրութիւնն իմաստութիւնը պիտի ունենայ՝ երէց ընկերներու օժանդակութեամբ՝ զարգանալ ու զարգացնել միանգամայն։ Մեր կողմէն միայն ներելի ըլլայ թելադրել յարգելի խմբագրութեան որ աւելի մեծ բաժին մը գրաւեն հոն հայկական նիւթերը. այդ ոճով հայ լեզուին հետ կարող են հայ աւանդութիւններով և յիշատակներով հայ ապրեցնել իրենց նրժգեհ եղբայրները։

Վերջին պահուն ձեռքերնիս հասաւ Փարիզէն «Հայ Արին»ն որ «երկու տարուան դադարէ վերջ մէջտեղ կու գայ»։ և, իր կտրգին, թէեւ անուղղակի, սակայն հայ գրի պաշտամունքն ունի, և ուրախ ենք նշմարելու Միութեան կեանքի պատկերին արձանագրութեանց մէջ նաեւ հայերէն

լեզուի դասընթացներ՝ որոնք կ'արդարացնեն իր անունը։

1934 նոր տարւոյն հետ ծնաւ փոքրիկ ամսաթերթ մ'ալ Յրումոսայէն (Ռումանիա) «Կոկոն», ամսաթերթ մանկական և պատանեկան, խմբագրութեամբ Յ. Գ. Աթանասեանի։ Մանկական տիտղոսին տակ, սակայն, նիւթերն ընտիր են՝ ազգային, և գովելի է հոն հայ լեզուի խնամքը սիրուն շարագրութիւններով և ուղղագրական հարցերով, որոնք, մանաւանդ մեր ցեղի ներկայ վայրափատին վիճակին մէջ՝ այնքան պիտի նպաստեն հայ գրի ծաւալման նոր սերունդին մէջ։

Երիտասարդական այս ճիգերուն ըով փայլուն գրական շարժում մ'էր Սիրունիի բերածն անցեալ տարի, «Արագ» տարեգրքով, որ երեւցաւ այնքան հետաքրքրական բովանդակութեամբ, մանաւանդ ուսմանահայ հին ու նոր գաղութին պատմութեան վերաբերեալ կարեւոր նիւթերով. ինչպէս հայ անուանի դէմքեր գրական ու քաղաքական մարգերուն մէջ, պրպտումներ հայ արուեստի և հնագոյն տաճարներու հետքերուն, քրոնիկոն մը այդ հայ գաղթականութեան՝ իր նախնական ծանօթ շրջանէն (967)։ հուսկ եկեղեցական թեմեր եւն։

Ռումանահայ «Արագ»էն վերջ և ըիչ շատ նոյն ուղղութեամբ՝ գրական շարժում մ'երեւցաւ Պուլկարահայութեան մէջ «Մասիս» տարեգրքով, զոր այնքան խնամքով խմբագրած է Արմէն Սեւան՝ Սոփիայի մէջ։

Բնականաբար վերջինս ալ Պուլկարիոյ հայ գաղթականութեան պատմութեամբ պիտի հետաքրքրէր մեզ։ Եւ ուրախալի է որ այդպէս է ան իրականութեան մէջ և առաջինէն ոչ նուազ և գոհացուցիչ։

Անկեղծ ըլլալու համար ըսենք, որ եթէ «Մասիս» գեղարուեստական տեսակէտով նուազ կատարեալ ու շնորհալի է (բայ ի արտաքին կողքի Մասիսեան ծրարախառն ու վերամբարձիկ սիրուն պատկերէն՝ որ Մ. Քէպապճեանի նուրբ մատներուն գործն է) քան Պարսամեան եղբարց «Կեանք և Արուեստ»ը, սակայն բովան

դակութիւնն իսկապէս ճոխ, զանազանեալ և օգտաշատ նիւթերով լի է, նիւթեր՝ մընայուն արժէքով մեր վաղուան համար։

Անտիպ գոհարներէ զատ՝ որ հոն կան հին և պատկառելի դէմքերէ և այնու իսկ կը հրապուրեն մեզ, գրական ու գեղարուեստական բաժնին մէջ կ'երեւին մեր տաղանդաւոր հասուն գրագէտները Խաչապեան, Օշական և անմահներէն թումանեան, Վարուժան եւն։

Նորերէն կը տեսնուին հոն Կառվարենց, Կ. Մեհեան, Ն. Պէշիքթաշեան (վերջինս ամենուրեք աւերադէպ գրականութեամբ. ինչպէս սրամիտ ու թափանցիկ զրչով կ'ուրուագէր Յունաստանի «Փունջ»ին մէջ Օ. Թօփուգեան, հեգնօրէն ակնարկելով նաեւ անոր հոգեկան դարձի մասին՝ որ տեղի ունեցած չէ... գէթ առ այժմ...):

Ինչպէս ըսինք, ընկերային, գիտական եւն. բաժնիներէն աւելի մեզ հետաքրքրող էջերը «Պուլկարահայը երէկ և այսօր»ի մէջ է. ուր Գ. Մեսրոպ, Ն. Գասպեան, Թ. Շ., Թաթոս, Գ. Թէրզեան, Հատաւեան, Փափագեան, Թիւթիւնճեան կու տան Պուլկարահայուն ծագումը և յետոյ կարգաւ իւրաքանչիւր քաղաքի — Ֆիլիպպէ, Սոփիա, Ռումսուր, Խաւքովոյ, Զաւորա, Պուրկազ — գաղութի մասին հին ու նոր տեղեկութիւններ։

Եւ ահա մեր թողցիկ ակնարկին մէջ պատկերը գրական շարժման Կ. Պուլի, Յունաստանի և Պալքանեան երկիրներու հայ գաղթականութեանց. շարժում մը՝ որուն իրականութիւնը հայօրէն չմեղմելու ճիգ մ'է, քան թէ կենսունակ արտադրութիւն մը։ Ճիգ մը դարձեալ՝ նմանելու նախապատեւրագման բեղուն շրջանին ուղղութեան՝ յետ-պատեւրագման հոգեբանութեամբ և նկարագրով, որ եզական է իր չափի չեկող գծերով։

Կ'անցնինք Յրանսա։ Հոս «Վէմ»էն զատ, որուն բեմին շուրջ հաւաքուած են հեղինակութիւններ և հասուն նիւթեր կը հրամցնեն, տարիէ մը ի վեր կ'ապրի «Հօկ»ը, և ըստ իր կոչումին և ուղղութեան, կու տայ և կը սփռէ գաղութա-

հայութեան Մայր Հայաստանի տնտեսական կեանքի շարժումներուն հետ նաեւ մտաւորական ապրումներու արձագանգը։ Որով ուղղակի միութեան կապը կը հանդիսանայ հայկական երկու մեծ զանգուածներուն։

«Սնահիւտ» դեռ կանգուն, դիրք չկորսնցնելու չափ կը մաքառի, մինչ իր քով վաղուց դադրեցան հետակորոյս «Չուարթնոց» ու «Մենք»։ Եւ հոն, Չօպանեան պարտասած՝ շուրջ կէս դար տեւող գրական աշխատութեան բեռին տակ կը կքի, և մինչ իր ճիգերովը, նորերն ու նորութիւնները կը բաշխերէ՝ իրականին մէջ իր հայեացքը օր քան զօր աւելի դէպ ի Հայաստան կը սեւեռի և անոր մշակութային և շինարարական վերելքը։

Ի զուր պիտի փնտռենք նոր կեանք և շարժում՝ Նոր աշխարհի մէջ՝ ուր հայութեան մղձաւանջը կը ծանրանայ միշտ և հոգեկան հաւասարակշռութիւնն արդէն վտանգուած է։ «Հայրենիք» միայն ճիգեր կը թափէ մնալ գրական պատենէշին վրայ, և «Կոչնակ» իր յատուկ նկարագրով՝ որ գրականէ աւելի ընտանիքին և հաւաքականութեանց մտաւորական նիւթ կը հայթայթէ ազգային — բարոյական — կրթական ուղղութեամբ։ Ուրիշ ձեռնարկներ չտողացին, բաց ի մանկական — ընտանեկան «Արփի»էն, որ կարեւոր պակաս մը կը լեցնէ արդարեւ։

«ԱՆԱՀԻՏ» (Ե. տարի, թ. 3-4 Հոկտ. — Դեկտեմբ. 1933). — Ըսինք թէ թերթը կանգուն է՝ անձնական մաքառուն ճիգերովը Պ. Չօպանեանի, յապաղումն իսկ մեր ըսածը կը փաստէ։ 112 էջերուն մեծ մասը քերթուածներու յատկացուած է։ Ն. Սաբաֆեան, ծանօթ քերթող «Մահուան և կեանքի կամուրջին վրայէն» խոր ու ծանր և տխուր քերթուած մը կու տայ. կը հնչէ նման թէքէեանի, բայց աւելի ուժեղ՝ առանց բոյրի, որ շատ մը նորերու պատրանքն է։ Լաւ պիտի ըլլար «մարմինիս» ու «միսիս» խորթ ձեւերը սրբագրուէին։

Մանուշեանի «Աղօթք»-ը տխրանոյշ շեշտ ունի թէեւ նուազ խոր։ Իսկ Գ. Կիւլեան կը ներկայանայ լի աւելնով և անսանձ արուեստով, ու կը պոռթկայ «Իմ երգը» և «Օրերուն հետ» քերթուածներով։ Հոն ցաւատանջ աղաղակն է խաբուած ու լքուած որբերուն, որոնք սակայն կը զգան թէ զոհ են չարիքին և կը ցուցնեն իրենց հոգեւոյն խորքը՝ ուր չէ մեռած բարութիւնը։ Կ. Փոլատեան «Անձայն բողոք»ով անգամ մըն ալ կը լսեցնէ դարերու մէջ կրկնուածը. «Աստուած իմ, ինչո՞ւ չարերն երջանիկ են, մինչ բարիները կը կրեն...»։ «Չօրութիւն»ը աւելի յանգուգն է, նիւթէն դուրս թուչելու և աստուածանալու տենչանքով, մինչ «Այգեկութեան» սիրային քնար է։

Հրաչ Քաջարեան, ծանօթ Բաղմալիպէն իր կորովի քերթուածներով, որոնց մէջ ուժ եւ խորհուրդ խառնած, մաքուր ու բարձր բարոյականով, ապրուած կեանքի մը դառնութեանց արտացոլումը կը սփռէ, շրջանակի մը մէջ միշտ ուր դիտող ու անցորդ անգէտ ու անզգայ են իր ցաւերուն. և այս, յայտնի է, զգայնութիւն մ'է, հասարակ ամէն անոնց որ որբութեան դառնութիւնն ապրեցան ու կ'ապրին։ Պիտի ուզէի Սեւակի հետ նմանութիւն գտնել իր խորհեւակերպին, և հիմնական տարբերուն՝ որոնցմով իր պատասաղը կը գործէ։ Եւ ինք կը շողէ, կը զանգէ զաղափար և նիւթ կարծես իսկական մարդը կերտելու հոգիէ և մարմնէ։ Ուրախ ենք որ Չօպանեան ալ, այս անգամ արժանի և իրական գնահատումով՝ Մ. — Ռափ. այս նախկին սանին համար կը գրէ նոյն այս թուին մէջ. «(Հրաչ Քաջարեան) վերջերս մեր մէջ յայտնուած ամենէն օժտեալ եւ բխտասարդ բանաստեղծներէն մէկն է»։

Քերթուածներէն դուրս երեք արժէքաւոր յօդուած կայ հոն. Արմենակ Սաքրգեանի «Հայերու գեղարուեստական գործունէութիւնը Կ. Պոլսոյ և Իկոնիոյ Սուլթաններուն օրով» (շար. և վերջ), ուր, այս անգամ կը յիշէ հայ ոսկերիչներ (Տիւլեաններէն), յախճապակի գործողներ,

թրքական թատրոնն հիմնող հայեր՝ թուրքերէն իսկ մեծապէս գնահատուած, յետոյ Չուհաճեան որպէս ստեղծագործող երաժիշտ, Նիկողոս երաժիշտ, Համբարձում Չէրչեան՝ հնարիչ թրքական երաժշտութեան խաղերուն եւն.։ Հ. Ալիեան կը հրատարակէ «Քուշակեան» տաղերու խումբ մը՝ դեռ շարունակելու դիտումով երկու ուրիշ մասեր ալ, կասկած յայտնելով հեղինակին մասին. մանաւանդ թէ յետոյ պնդելով «Առանց տարակուսի հայրեն քառեակները ոչ մէկ հեղինակի գործեր են և ոչ մէկ ժամանակի (98)»։ Ուրախ ենք լսելու, այդ առթիւ, թէ Պ. Չօպանեան ճոխագոյն հրատարակութիւն մը կը պատրաստէ Քուշակի գործին։

Հայ երաժիշտներուն համար կարեւոր տեսութիւն մը կը պարզէ, մասնագիտօրէն, Մ. Տարէնտէեան «Խորհրդածութիւններ» — «Հայաստանեայց Եկեղեցւոյ պատարագ»ի հրատարակութեան առթիւ։

Չօպանեանի «Տպաւորութիւններ և յիշատակներ Հայաստանէն» (Բ. մաս) յօդուածին մէջ շատ բան կայ օգտակար և կարեւոր՝ ամէն հայու համար Հայաստանի գեղարուեստին և մշակութային բոլոր շարժումներու մասին։

Իսկ «Քրոնիկ»ը շտեմարան մ'է անկապակից նիւթերու. առաջին մասը քաղաքական՝ նուազ կարեւոր։ Հայ մամուլի և հրատարակութեանց մասը ճոխ է. ուր Պ. Չօպանեան լաւագոյն գրիչներու շարք մը ներկայացնելէն վերջ (86-7) կարծես ընթերցողին ուզէ հասկցնել թէ տողերս գրողը զանոնք գրչակ համարած ըլլամ։ Փառք Աստուծոյ, այդքան ըմբռնում չի պակսիր մեր քով, ինչպէս չի պակսիր մուր՝ Պ. Չօպանեանի քով, նման ենթադրութիւններ ընելու, և աւելի անարգ ու ատելի բացատրութիւններով մեզ մրտաբու։

Մեր գրչակ համարածներու անունը չկայ իր ցանկին մէջ՝ այս անգամ. բայց անոնց զովեւոր կար՝ ուրիշ անգամ, ինչո՞ւ. — զանոնք այլոց հետ փոխանակելով մեր գրածը խեղաթիւրել փորձած է արդեօք, թէ լռելեայն յետս կոչում։ Ինք արհամարհած է

անծանօթ գրագէտը, որ կը շարունակէ խօսիլ, և Պ. Չօպանեան կրկին կը ստիպէ որ իրեն ներկայացնեմ զանի. «Չօպանեանի հանդէպ Չեր մղած պայքարը տեղին է։ ... (Անուններ զորս պատշաճ կը դատեմ լուծութեան մէջ թաղել առայժմ) տափակութիւններ են։ Անոնց գրականութիւնը զուրկ է արուեստէ։ Չօպանեան կը վարէ քաղաքականութիւն մը զոր ուսմահայր պիտի ըսէր դէպ ի գալիս։ ... Հարկ է պայքար մղել գրականութեան մը դէմ՝ որ միտումնաւոր է»։ Այս տողերը մեզմէ աւելի փորձ և հասուն գրագէտի են. — մենք ի՞նչ մեղք ունինք։

«ՍԻՈՆ» — 1934 Յունուարի թուին մէջ հետաքննող յօդուած մ'ունի Նոտար «Տօնագիտական» ի տակ՝ Ս. Ծննդեան առթիւ։ Հետաքննարկան և կարեւոր է Աղանունի Սրբազանի «Ս. Ծննդեան աստղին աւանդութիւնը հայ մատենագրութեան մէջ»։

Նոյն թուին մէջ գետեղուած է Ս. Էջմիածնի Վեհ. Կաթողիկոսին յանձնարարութեամբ՝ Գարեգին Ս. ի կողմէ գրուած պատասխանը՝ Ատանալեան բողոքական վերի հարցումներուն, որոնց վերջինը միութեան վերադառնալու ձգտումը կը զգացնէ. «Մայր եկեղեցիին հետ միանալ երբ և ինչպէս կարելի կրնայ ըլլալ»։

Հարցը այժմեական է և կարեւոր։ Գարեգին Ս. ի պատասխանը շատ ուղիղ և անուղիղ կողմեր ունի, որոնց մասին չենք կրնար հոս երկարել։

Փետրուարի թուին մէջ Գ. Մխալեան խնամուած վերլուծում մը կ'ընէ «Վահան թէքէեանի գրակ. գործունէութեան»։ և Աղանունի Ս. կու տայ բանասիրական գրութիւն մը «Մարգարէական գրուածքներ հայ մատենագրութեան մէջ» որոնք են Մեթոտիոսի և Ագաթրոնի անուամբ հասածները, և Սրբազանն իր յօդուածը կը գրէ որպէս լուսաբանութիւն Պրն. Յ. Քիւրտեանի թողած բաց մը կամ տարակոյս մը լուծելու։

Յ. Քիւրտեան կը շարունակէ « Պուլ-կարահայոց » մասին պատմական ծանօթութիւնները :

Վահէ — Վահեան նախորդ թուին մէջ « Լաւ է » և վերջնոյս մէջ « Սնճրեւէն վերջ » ինքնատիպ, իմաստալից քերթուածները կը ներկայացնէ : Հաճոյքով կարդացած ենք իր « Արեւ — անձրեւ » հաւաքածոն ալ, ուր եթէ արուեստը դեռ չէ բիւրեղացած, սակայն կ'ապրի բանաստեղծը :

Վերջին թուին մէջ խմբագրութիւնը զետեղած է « Ակամայ անդրադարձաբար » զոր՝ թէեւ կրկին ու կրկին ներողամիտ և անկեղծ սրտով փորձեցինք կարգաւ, բայց չենք կրնար խղճով ըսել թէ բարի դիտաւորութեամբ և ի սէր ճշմարտութեան գրուած են անոնք :

Հոն « Սիւն » ի խմբագրութիւնը կը հեգնէ, կը խռովի, կը մեղադրէ այս ու այն անձը (մեզմէ) և « Բազմավէպ » ի խմբագրութիւնը, կը խեղաթիւրէ, կը սայթաքի մոլորութեանց մէջ և իբրեւ հիմնական հարց՝ կը դատապարտէ միութեան կոչը, զոր պաշտպանած էինք :

Առանց երկար վէճերու՝ մեզի ներելի ըլլայ հարցնել « Սիւն » ի. Եթէ դատապարտելի է եկեղեցական միութիւնը, ինչո՞ւ ապա դարբնով զայդ հետապնդեցին մեր աստուածաբանալ հայ հայրապետները. ինչո՞ւ Գր. Վկայասէր Պատգամաւոր և նա մակ զրկեց Գրիգոր Է Ս. Քահանայապետին՝ եկեղեցական միտքեան համար :

Ինչո՞ւ Շնորհալի, փարած միութեան գործին, անոր յաջողութեան համար կը յիշեցնէր Կոմենիոս կայսեր. « Նա զի և լռաբ էր և սուրբ և առաջին առնեալն և պիտոյրսաց հայրապետն Հռովմայ և փոխանորդն Պետրոսի Առաքելոյ » յիշող անտի իմաստեղ՝ առաքեաց խօսել առաջի սուրբ քաղաքաշէնարեանց ձերոյ վասն ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏՈՅ » :

Ինչո՞ւ նոյն միութիւնն իրագործելու համար Գր. Տղայ գումարեց Հռոմկայի պատմական ժողովը :

Ինչո՞ւ Լամբրոնացին, ու անկէ յետոյ գրեթէ մեր բոլոր կաթողիկոսները՝ Քա-

րավէժ, Ապիրատ, Յովհաննէս Է, Կոստանդին Բ՝ Սոյ և Ատանայի ժողովներով, յետոյ Յակոբ, Մխիթար՝ Սոյ Զ. ժողովով, և դեռ Կոստանդին փոքրեմտիոյ ժողովին մէջ և կրնանք շարունակել մինչեւ 1680, երբ Յակոբ կաթողիկոս « Գրեաց առ Աղեքսանդր և առ Իննոյնեցիս վասն միաբանեայ զեկեղեցիս Հայոց ընդ Հռովմայ » Բորիկ վ. ձեռքով... և դեռ Եղիազար Կլայեցի, հուսկ Նահապետ Կաթ., Եսայի՝ Սոյ Կաթ. ինչո՞ւ հետապնդեցին միաբանութեան հարցը :

Ինչո՞ւ 1820ին, Ենի Գարուի մէջ իբրեւ աստուածային և ցանկալի բան մը նկատեց ամբողջ ազգը՝ Կրօնական միութիւնը՝ ըստ « Հրաւէր Սիրոյ » ի, որ դժբախտաբար խափանուեցաւ :

Ինչո՞ւ հոն « Ա. » ի քառնայ զգայրակ-դարձեւ ԱԶԳՈՎԻՆ արժան համարեցաք. եսի ոչ երգել զնոյն Լեւոնի և Ժողովոյն Քաղկեդոնի, յեկեղեցական պաշտամունս մեր ի շարակաւ և ի ձեռնադրաբեան գրոց ԲԱՌՆԱՆՈՎ : Երկրորդ՝ ոչ յիշել ի պատարագի զանուանս Յովհաննէս Որոտնեցոյն, Գրիգորի և Մովսիսի Տարեացեաց » կ'ըսուի :

Եւ ինչո՞ւ, ընդհակառակն, դեռ Քաղկեդոն կը նշովուր և յիշեալ գայթակղեցուցիչ հոգիները սուրբ կը նկատուին :

Ինչո՞ւ կը դատապարտուի Ս. Լամբրոնացոյն մտայնութիւնը որ նուիրագործուած է Հռոմկայի և յետոյ Սոյ և Ատանայի ժողովներով, և կը փառաբանուի միութեան հակառակորդ և հակաքրիստոնէական հոգին Հաղբատացիներուն, Չորոգետացիներուն և Սանահնեցիներուն, որոնց դէմ կը վճռէ (Սոյ և) Ատանայի Ժողովքը. « Եւ մեր ի ձեռն աստուածաշունչ Գրոց և սուրբ Հարցն Վարդապետաբեանց, և կանոնեալ սահմանաց ուղղափառ Ժողովոյ՝ գրազուժ ժամս տրամաբանեալ ընդ լոսս, ունայն և սնոտի և առապելաբանութիւն ցոյցաբ զուտուն լոցս, և գտաք արդար և ձխարիտ և ուղիղ զաւանդութիւն ժողովոց սրբոց Հարցուն և Կարողիկոսի Գրիգորի » :

Գարձեալ, ինչո՞ւ 1820ին, ի Կ. Պոլիս, Ազգովի կը դաւանին մեր Ս. Հարց հա-

ւատքով՝ որ համաձայն է Կաթողիկէ եկեղեցւոյ ուղղափառ դաւանութեան՝ թէ արդարեւ մեռնելէն անմիջապէս վերջ կ'արժանանան աստուածութեամբ և րանական մշտնջենաւոր փառքին, և « ներելի մեղօք ննջեցեալ » ներք և « թողեալ մահուց փառքս զապաշխարանսն ոչ վճարող » ներք կը մնան այն տեղոյն մէջ որ « կոչի ի մեզ կայան, զոր այլք կոչեն քաւարան կամ մաքրարան » :

Իսկ « Սիւն » ինչո՞ւ դեռ կ'ուզէ պնդել և ընդունիլ՝ հինէն դատապարտուած մոլորութիւնը՝ որուն համեմատ վերջին դատաստանէն վերջ է արդարեւրուն և քաւեալներուն կատարեալ երանութիւնը : Ինչո՞ւ նոյնպէս ազգովի դաւանուած քաւարանի ուղղափառ վարդապետութիւնը նորահնար կը համարի և որպէս թէ մեր եկեղեցիէն մերժուած :

Ինչո՞ւ ճիշդ մեզ մրտաւիւռ ունիրառքեան կեղտով, մեզ որ մեր էութեամբ, ազգային, լեզուական, եկեղեցական և արտաքին բոլոր աշխատութիւններով ազգը վերածնած և իր մէջ գիտակցութիւնն արթնցուցած ենք և այդու իսկ դատապարտած ենք ու կը դատապարտենք ու նիթորներու գործած աւերը լեզուական և ծիսական մարզերուն մէջ :

Ինչո՞ւ « Սիւն », Կրօնաբերք, ընդհակառակն կը պաշտպանէ յօդուած մը ուր ճիշդ կայ մերժելու Աւետարանին մէջ կէտ մը :

Ինչո՞ւ, « Սիւն », Կրօնաբերք, կը լռէ երբ հայ մամուլին մէջ կը շրջին աւելի կամ պակաս մոլորական ու սխալ վարդապետութիւններ յանուն « Հայ Առաքելական ազգային » եկեղեցւոյ, մինչ բոլորովին հակառակ են անոր ուղղափառ Հարց դաւանութեան : Չանդադարձաւ, օր. երբ « Նոր Լուր » (18 փետր.) ըսաւ. « (Հայ Առ. եկեղ.) չի զանազաներ աստուածային և մարդկային բնութիւնները : Օրինակի համար չ'ըսեք թէ Յիսուս իբր մարդ իր մարդկային բնութեան մէջ ծարաւեցաւ... և իբր Աստուած քաւեց ջուրերուն վրայ » և այլն (ընդգծումները մերն են. Մ. Խ.) :

Թողունք պահ մը Կաթողիկէ եկեղեցւոյ վարդապետութիւնը. և միթէ Շնորհալին՝ հայ եկեղեցւոյ բերանը չէ՞ որ կ'երգէ. « Ծարաւեցաւ Տէրն ի խաչին ՈՐՊԷՍ ԸԶՄԱՐԴ » :

Եւ անդին, օր. Ս. Սահակ (Թերեւս) կամ ուրիշ ուղղափառ մեր հայրերէն մէկը չէ՞ որ կ'երգէ. « (Յիսուս) Տնօրինաբար արտասուելով... ՈՐՊԷՍ ՄԱՐԴ ՀԱՐՑԱՆԵՐ... Եւ ՈՐՊԷՍ ԶԱՍՏՈՒԱԾ ԲԱՐՐԱՌՈՎ ՅԱՐՈՒՅԱՆԷ » : (Շար. Ղազարու յարութեան) :

Հաւնեցաւ « Սիւն » երբ « Փարոս Հայաստանեայց » հիւրընկալեց սա բացատրութիւնը. « Լուրերի տնկած, Կալվինի ջրած և Աստուծոյ աճեցուցած հաստատութիւնը — Եկեղեցին եւն. » (Նոյեմբեր-Դեկտ. 1933, էջ 148) : Հայ ուղղափառ Ս. Եկեղեցին միթէ չի՞ նզովեր այս ուրա-ցեալները : Ո՛ւր է « Սիւն » Կրօնաբերքի նախանձախնդրութիւնն եւ ճշմարտասիրութիւնը :

Ինչո՞ւ վերջապէս « Սիւն » դեռ կը զբաղի աննշան և անփնաս « Էջմիածնական » բառով, թողած կարեւոր խնդիրները :

« ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ »

1933, Թ. 3-12 (4 պրակ)

Սկիզբէն կը յայտնենք մեր ցաւը տնտեսական տագնապին համար՝ որուն մասնուած է խմբագրութիւնը, Օգոստեանի կողմ հայ բանասիրութեան է. և շահողը մեր զրականութիւնը պիտի ըլլայ — Բաց ի քանի մը զբախտականներէ Հ. Ակինեան կը շարունակէ (Մարտ-Հոկտ) մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը « Մովսէս Գ. Տաթևացի կաթողիկոսի կեանքն ու գործունէութիւնը », « Հայ կեանքն Հալէպի մէջ » (1605-1635), « Սիւնի զգրի Լեւոնոյ ուղեգրութիւնը » հետաքրքրական և « Եղեղէ » ի մասին ուսումնասիրութիւնը (շար.) :

Ողբացեալ Տաթևանի « Արամբէնի գործածութիւնն արեմնեան պետութեան մէջ » և « Հաթիբ և Ուրարտեան » : Սարգիսի ընդարձակօրէն կ'ուսումնասիրէ (1932. շար. 1934) « Վրաստան և Հայերը », և Հ. Ա. Խրլաբեան « Յովհաննէս Այվազովսկի. ծովանկարիչ » :

Ս. Եփրեմի « Ասացուածք վասն Նիկիոյի դեպքի » ընդ զոր հրատարակած է Պ. Է. թանկազին է ի մէջ այլոց լեզուական տեսակետով՝ դասական շրջանի մասին, Սափրաստեան Ա. « Խոյթ-Բանաշէն զաւանդներ » ու ուղեւորական տեղեկագրութիւններ կ'աւանդէ, յետոյ « Հայ » անունն ըստ Կրէմլերի (Թրգ. Պ. Է.), հուսկ Նշանեան Մ. Էպս. հրատարակուած « Երեմիա Զէլէպի Քեօմիւր-ճեանի զանձն ի մահն Յակոբ կաթողիկոսի » :

Հ. Եղիս. Փէճուկեան